կային ։ Ի դոյզն ընթացից թուէին նոքա
ինձ վաստակաբեկք, հայրն ընդ որդիս.
և տեսանէի զի պատառէր նա սայրա-
սուր ժանեօք զկողս նոցին ։ Եւ իբրև
զարթեայ ընդ այգս այգուն, լուայ զաչ-
խարել որդեկաց իմոց՝ որ կային 'ի քուն
անդանօր զինև՝ և խնդրել հացիկ ։
Անագորոյն ես, եթէ տակաւին ոչ ար-
գահատիս ընդ գոյժն որ ազդէր իմում
սրտի. և թէ չարտասուես ընդ այս, և
ընդ ինչ լիցիս արտասուել ։ Վաղ իսկ
զարթուցեալ էին 'ի քնոյ, և ժամն ճե-
պէր՝ յորում հանապազ սովորն էին մեզ
ածել կերակուր. անցնիւր երկբայէր
ընդ անուրջս իւր ։ Եւ ահա լուայ ներ-
քուստ ճռնչիւն աղխելոյ դրանց ահեղ
դղեկին. և զաչս իմ 'ի դէմս որդեկաց
իմոց դարձուցի առանց յօդելոյ բար-
բառ ։ Ոչ արտասուէի՝ այնպէս սառա-
ցեալ 'ի ներքս սրտիս. ողբային նոքա.
և Անսելմեակն իմ ասաց ցիս. Հայրիկ,
Էր այդպէս հայիս, զի՞ եղև ընդ քեզ ։
Այլ ես ոչ արտօսր, և ոչ յաւելի բան
մի զօրն զայն, և ոչ զգիշերն որ ածէր
յաշխարհ զարևն վաղուեան ։ Ի ծագել
աղօտ նշուլից 'ի խորշ դժընդակ բան-
տին, և 'ի տեսանել իմում 'ի քառեակ
դէմս անդ զնոյն իսկ զիմն կերպարան,
խածի առ վշտիս զերկոսին ձեռս իմ ։
Նոցա զմտաւ ածեալ՝ զի ես զայն առ 'ի
կազդուրել զսիրտ առնէի, ելին կան-
գնեցան իսկոյն և ասեն. Հայր, յոյժ
դուզնաքեայ իցեն մեր թախիծք, թէ
մեօք ճարակիս. դու զգեցուցեր մեզ
զայս հէգ մարմին, և դու 'ի սմանէ մեր-
կացո զմեզ ։ Յայնժամ թագուցի զտագ-
նապ սրտիս, զի մի՛ յաւելից նոցա տը-
խրութիւն. կացաք անբարբառ զայն օր
և վաղիւ. երկիր անողորմ, ո՞հ էր ոչ հեր-
ձար ։ Եւ այն ինչ հասաք աւուր չոր-
րորդի, անկաւ առ ոտս իմ կադդոս տա-
րածեալ, և ասէ. Հայր իմ, ընդէ՞ր չօգ-
նես ինձ ։ Աստ անկաւ մեռեալ. և որ-
պէս դու զիս տեսանես, տեսի ես անդ
զերեսին մի առ մի անկեալ 'ի հինգե-
րորդի և 'ի վեցերորդ աւուր 'ի գետին ։
Յայնժամ գնայի ես կոյր առ խարխափ
առ մէն մի նոցունց, զաւուրս երիս
ձայնեալ զնոսա՝ յետ մահու նոցին ։ Եւ
ապա յաղթեաց սով վշտաց սրտի ։ Յա-
սել իւրում զայս, դժնեայ հայեցիւք
ելած վերստին զողորմելի գանկն ա-
տամամբք իւրով որ պատահեցին ոս-
կերն՝ իբրու շան ժանիք կարծրակուռ ։
Ո՛վ Պիսա քաղաք, նախատինք գրոհից
գեղապանծ երկրին, ուր քաղցրահնչէ
սի՛ն 'ի լսելիս. քանզի մերձակայք քո
յամեն քաղաքք 'ի պատժել զքեզ, հաս-
ցէ Կապրայա, հասցէ Գորգոնիա, թում-
բըս կանգնեսցեն 'ի բերան Առնեայ, զի
հեղձցին 'ի քեզ բնակիչք համօրէն ։ Ե-
թէ զՈւկոլին կոմս եցոյց համբաւ բեր-
դորէից քոց եղեալ մատնատու, չէր պարտ
քեզ զորդիս նորին այնպիսեաց մատ-
նել աղետից ։ Զքմեղս առնէր հասակ
նորաբոյս և նորին Թերէ՝ զՈւկոլչչինոնէ
և զՊրիկադա և զմիւս երկոսին զոր երգն
իմ 'ի վեր անդր յիշատակեաց ։

ՏԱՆԴԷ, ՏԱՐՏԱՐՈՍ

ԵՐԳ ԼԲ–ԼԴ.

Գաղտնիք Ովկիանոսի.

Պ. կրին անուանի ծովասուզակը Հա-
յիդիի մէջ Սիլվըր Պէնքս (Արծաթեայ
խարակք) ըսուած տեղը տեսածը այս-
պէս կը նկարագրէ. «Երբ ծովուն մէջ մը-
խեցայ, բուստի մեծ խարակի մը վրայ
կեցայ, որուն երկայնութիւնը 40 մղոն,
լայնութիւնը 10էն 20 մղոնի կը հասնէր ։
Այս բուստի ահագին խարակը ծովա-
սուզին առջին այնպիսի գեղեցիկ ու
վեհ տեսարան մը կը բանայ՝ որ երբեք
տեսնուած չէ ։ Ջրին խորութիւնը 10էն
ինչուան 100 ոտք կը զանազանի. և
այնպէս ջինջ է որ ծովասոյզը ջուր մըտ-
նելէն ետքը 2 ու 300 ոտք հեռաւորու-
թենէ կրնայ տեսնել քիչ մ'աչքի մշու-
շութեամբ ։ Շատ տեղ Ովկիանոսին
խորը մարմարինէ սալայատակի պէս
շիտակ է. ուրիշ տեղ՝ բուստէ սիւներ
կան կանգնած, 10էն ինչուան 100 ոտք
երկայնութեամբ և 1էն 8 ոտք տրամա-
գծով ։ Ամենէն բարձր սիւներուն գլուխ-

ները հաղարաւոր առկախեալ կամար-
ներ կան, որոնց ամեն մէկն ալ ուրիշ
հաղարաւորներով զարդարուած, ամ-
նը միատեղ ջրերու երևակայեալ յա-
ւէրժահարսանց բնակութիւն կը կազ-
մեն։ Ուրիշ տեղեր ալ կամար կամարի
վրայ ձևացած է. ու երբոր ծովասոյզը
Ովկիանոսին տակը կեցած՝ աչք մը տայ
այն բազմապտոյտ բաւիղներու վրայ,
վրան վախ մը կը տիրէ, և կը կարծէ
որ երկայն ատենէ 'ի վեր Ովկիանոսի
ալեաց մէջ թաղուած մեծ մայր եկե-
ղեցւոյ մը մէջ ըլլայ։ Ասդիս անդին
բուստերը ջրին երեսէն վեր կը բար-
ձրանան, իբրև թէ բարձրագոյն սիւներն
ըլլային և աշտարակներ հոյակապ և հի-
մայ աւերեալ տաճարաց. իւրաքանչիւր
բուստերու խոռոչից միջոց՝ ուր ջուրը
հող դիզած է՝ կան անթիւ տեսակք
թուփերու, մացառներու և բոյսերու։
Ամենուն ալ գոյները նուազ են իրենց ըն-
դունած լուսոյն նուազութեանը պատ-
ճառաւ, թէպէտ և զանազան գոյնի աս-
տիճաններ ունին, և ամենն ալ ցամա-
քային հողուն վրայի աճող բոյսերէն բո-
լորովին տարբեր տեսակ են։ Անոնց մէ-
ջէն մէկը մասնաւորապէս իմ ուշադրու-
թիւնս գրաւեց. լայն բացուածքով ծո-
վային հովահարի մը կը նմաներ, երփն
երփն և զանազանեալ գոյներու աստի-
ճաններով։ Սիլվըր Պէնքսի մէջ բնա-
կող ձուկերն ալ իրենց բնակարանին
պէս նորատեսիլ են, ամեն տեսակ ձև,
գոյն և մեծութիւն ունին. կանոնաձև
կոպիէն սկսեալ մինչև գնտանման արե-
ւաձուկը, ամենէն տխուր գոյնէն մին-
չև դլփինի վրայի շարժական գոյները։

Կապարեայ անօթներ գործածելու վնասը։

Ամենքը գիտեն դէշ կերպով անա-
գուած ամաններ գործածելէն առաջ ե-
կած անպատեհութիւնքը, կամ լաւ ևս
ըսենք պատահած վնասները. վասն զի
շատ անգամ անագին համեմատութիւ-
նը շատ աւելի քիչ կ'ըլլայ քան զկապա-
րինը։ Ամեն ազգաց մէջ այս նկատմամբ
ոստիկանութեան պատուէրները շատ
քիչ անգամ'ի գործ դրուած են, և յայտ-
նի է այսմ հետևանք եղած դիպուածնե-
ները։

Բաւական ատեն է որ Գաղղիոյ պա-
տերազմի պաշտօնեայն կը պատուիրէր
բոլոր զինուորական հիւանդանոցաց
գլխաւորներուն, և կ'ուզէր որ ապահով
ըլլային այս հրամանաց ճշգրիտ կերպով
կատարուելուն։ Քանի մը ամիս կայ որ
Պ. Ժաննէլ ուղղած է բժշկութեան ճե-
մարանին գրութիւն մը այս նիւթիս
վրայօք, որ նախ կը խօսի զինուորական
հիւանդանոցին նկատմամբ՝ որուն գլ-
խաւոր դեղավաճառն է, և յետոյ Պոր-
տոյ քաղաքին անագիչներուն գործա-
ծած անագին վրայ մասնաւոր հետա-
զօտութիւններ ըրած ըլլալով։

Այս կարևոր աշխատութեանս վրայ
է որ Պ. Կոպլէ կարդացած է խղճմտան-
քաւոր և հմուտ տեղեկութիւն մը, յո-
րում յիշատակեալ են նոյն յանձնարա-
րական ժողովքին ըրած լուծումները,
որ ահաւոր արդիւնքներ ցուցըներ են
հասարակաց առողջութեանը նկատ-
մամբ։ Այսպէս 'ի Բարիզ տարգալ մը
գտած են, որ կը բաղկանար 62 անագէ
և 38 կապարի խառնուրդով. թաս մը,
38 անագի և 42 կապարի խառնուր-
դով. սուրճի տարգալ մը, 75 անագի
և 25 կապարի խառնուրդով. աղբիւրի
մը ծորակ, 70 կապարի և 30 ծարրա-
քարի խառնուրդով. ստոման մը, 80
կապարի և 20 ծարրաքարի խառնուր-
դով. և այլն։

Ա. Անագօծելու՝ ընտիր անագ գոր-
ծածել, որուն մէջ կ'ըլլայ 1–2 առ 100,
որովհետև այս մետաղը վտանգաւոր չէ
հասարակաց առողջութեանը համար,
և որ կրնայ միայն գործածելի ըլլալ
այս կիրառութեանս համար։ Բ. անա-
գին խառնուրդը պէտք է 5–6 ըլլայ առ
100 կապարի բոլոր անօթներուն և խո-
հակերոցի սպասներուն համար, վասն
զի այս քրայական նիւթոց խառնուած-
քը շատ վտանգ մը չիպատճառեր և բա-
ւական է մետաղին հաստատութեանը